of daily, weekly, monthly and annual study loads. The activity of the regulatory mechanisms of heart rhythm was evaluated by recording and analysis of ECG by variation pulsometry method of R.V. Baevsky. A decrease in heart rate integral parameters in all groups in the dynamics of daily and weekly teaching load was observed, which was most expressed at the end of the training week especially among boys in grade 11. Periodic changes of pupils' heart rate parameters in all the groups were registered in the dynamics of the academic year: a decrease of the investigated parameters in December was a result of the fatigue, which is developing in the dynamics of the academic load, but in May activity of the regulatory mechanisms of cardiac rhythm increases slightly, which is the result of students' organism neuro-endocrine reconstructions in spring.

*Study tension – integral parameters – gender-sexual differences –
parasympathetic circuit – fatigue*

Վերջին տասնամյակում մասնագիտացված դպրոցների ստեղծումը զգալիորեն մեծացրել է աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածությունը: ձևումնական ծրագրերի բարդացումը, նոր առարկաների դասավանդումը, հաղորդվող տեղեկատվության որակական և քանակական աճը, շաբաթական ծանրաբեռնվածության մեծացումը, համակարգչային ուսուցման ներդրումը, թերշարժունության տևական շրջանները, ոչ լիարժեք սնունդը, ժամանակի սղությունը նպաստում են օրգանիզմի հոմեոստազը կարգավորող մեխանիզմների մշտական լարվածությանը [2-5, 7]: Մինչդեռ դեռահասունության շրջանում է ձևավորվում սովորողների ֆիզիկական, հոգեկան, սեռական, սոցիալական առողջությունը, որը մարդն օգտագործում է ամբողջ կյանքի ընթացքում: Հատկապես դա վերաբերվում է 15-17 տարեկան որը համարվում է օնտոգենեզի բեկման տարիք: Ավագ դպրոցի աշակերտների հարմարման կարևորագույն տարրը մտավոր աշխատունակությունն է, որն ամենաարագ փոփոխվող ցուցանիշներից է: Այն մի կողմից ապահովում է ունակությունների, հմտությունների և գիտելիքների յուրացումը, իսկ մյուս կողմից ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում հանդիսանում է օրգանիզմի գործառնության վիճակի տեղաշարժերի ֆիզիոլոգիական չափանիշը: Եթե այն չի համապատասխանում օրգանիզմի գործառնական հնարավորություններին, ապա առաջացնում է առողջության անբարենպաստ շեղում ու իջեցնում ուսումնական գործունեության արդյունավետությունը:

Ուսումնական ծանրաբեռնվածության տարիքային թույլատրելի նորմերի խախտումը բերում է նաև օրգանիզմի հարմարողական հնարավորությունների նվազմանը [1, 2, 6, 11]: Չնայած օրգանիզմի հարմարողական պոտենցիալը և այն կարգավորող մեխանիզմներն ունեն հստակ արտահայտված սեռային, հասակային, անհատական, գենետիկական կախվածություն, սակայն դրանց իրականացումը կախված է էկոլոգիական միջավայրից և օրգանիզմի մարզվածությունից [5,8,10]: Գոյություն ունեցող ժամանակակից ուսուցման համակարգը շատ հաճախ ճնշում է օրգանիզմի ֆիզիոլոգիական հնարավորությունները, հաշվի չառնելով կենսաբանական հասունացման անհատական տեմպերն ու ձևաբանագործառնության առանձնահատկությունները: Դա հասցնում է հարմարման մեխանիզմների լարվածությանն ու խզմանը, զգալիորեն իջեցնում առողջության մակարդակը: Ժամանակակից դպրոցականի բնութագիրը դա սակավաշարժ, նյարդահոգեկան լարվածությամբ դեռահաս է [2,9]:

Սույն հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել կրթական ավագ դպրոցի IX-XI դասարանում սովորող աղջիկների և տղաների սրտի ռիթմի կարգավորող մեխանիզմների լարվածության մակարդակն ուսումնական գործընթացի տարբեր փուլերում:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են Իրանի Իսլամական Հանրապետության Մարի քաղաքի Շահիդ Բեհեշտիի անվան տաղանդավոր երեխաների ուսուցման աղջիկների և տղաների դպրոցներում:

Աշակերտների սրտի ռիթմի վերլուծության նպատակով գրանցվել է նրանց էլեկտրասրտագիրը (ԷՍԳ) առաջին ստանդարտ արտածմամբ պառկած վիճակում: ԷՍԳ-ի ազդակները


Էլեկտրաստացրիչից վերափոխվելով ձայնային հաճախության փոխանցվել են ձայնագրիչի ելքին, ապա ավտոմատ թվային վերափոխիչով Pentium IV համակարգչին, ուր վերամշակվել են համակարգչային հատուկ մշակված ծրագրով՝ համաձայն Ռ.Բանսկու (1984) վարիացիոն պուլսաչափման չափանիշների: Ծրագրի մաթեմատիկական բլոկում ստացված կարդիոինտերվալագրերը (ԿԻԳ) ենթարկվել են հատուկ մշակման ու դրա արդյունքում յուրաքանչյուր հետազոտվողի համար գրանցվել են սրտի ռիթմի հիստոգրաֆիկական, ռիթմագրային, սկատերգրային և սպեկտրային մեծությունները բնորոշող մի շարք ցուցանիշներ. մոդայի տատանասահմանը (AM_0), վարիացիոն թափը (ΔX), կարդիոինտերվալների տատանողականության գործակիցը (V_k):

Վարիացիոն պուլսաչափման տվյալների օգնությամբ հաշվարկվել են նաև սրտի ռիթմի հետևյալ ինտեգրալային ցուցանիշները. կարգավորող համակարգերի լարվածության ցուցիչը՝ $L_3 = AM_0 / 2\Delta X * M_0$; վեգետատիվ հավասարակշռության ցուցիչը՝ $V_2 = AM_0 / \Delta X$; ռիթմի վեգետատիվ ցուցիչը՝ $\Omega V_3 = 1 / M_0 * \Delta X$; կարգավորման գործընթացների աղեկավարության ցուցիչը՝ $V_4 U_3 = AM_0 / M_0$:

Օրվա ընթացքում հետազոտությունները կատարվել են 2 անգամ՝ մինչև դասերը և դրանց ավարտից հետո շաբաթվա ընթացքում 2 անգամ՝ շաբաթ և հինգշաբթի օրերին՝ որպես շաբաթվա սկիզբ և վերջ, քանի որ Իրանում ըստ եվրոպական օրացույցի ուրբաթ օրը համարվում է հանգստյան օր, տարեկան 3 անգամ՝ հոկտեմբերին, դեկտեմբերին և մայիսին:

Արդյունքներ և քննարկում: IX դասարանի աշակերտների սրտի ռիթմի ակտիվության սեռա-տարիքային ցուցանիշների ուսումնասիրությունն ուսումնական ծանրաբեռնվածության դինամիկայում ցույց է տվել, որ տարվա սկզբում աղջիկների սրտի գործառական վիճակը կարդիոռիթմագրի տվյալներով ($L_3 = 100.21 \pm 10.54$ պ.մ.) տղաների համեմատությամբ առավել բարեհաջող է: Մինչդեռ տղաների սիմպաթիկ ազդեցությունների մակարդակը և սրտի քրոնոտրոպ ֆունկցիայի կենտրոնական կարգավորումը եղել է ավելի բարձր, քան աղջիկներինը, որն արտահայտվում է L_3 -ի և մնացած ինտեգրալային ցուցանիշների մեծությունների տարբերությամբ ($L_3 = 120.31 \pm 12.06$ պ.մ.): Աղջիկների համեմատությամբ տղաների սրտի ռիթմի վրա առավել արտահայտված է ՎՆՀ-ի սիմպաթիկ օղակի ազդեցությունը, որի պատճառով սիմպաթոտոնիկների մեջ գերակշռել են տղաները, իսկ վագոտոնիկների մեջ՝ աղջիկները:

Ուսումնական օրվա վերջում ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների մոտ դիտվում է ֆիզիոլոգիական նորմայի համեմատությամբ սրտի ռիթմի տատանողականության ցուցանիշների էական փոփոխություն, որը բնորոշվել է կարգավորման սիմպաթիկ մեխանիզմների թուլացմամբ և պարասիմպաթիկ օղակի ակտիվացմամբ: Շաբաթ օրը աղջիկների L_3 -ն օրվա վերջում նվազել է 18.6%-ով ($p < 0.05$) և այն ուղեկցվել է AM_0 -ի նվազմամբ 13.4%-ով, M_0 -ի և ΔX -ի մեծացմամբ՝ համապատասխանաբար 5.9%-ով և 16.1%-ով ($p < 0.02$): Սրտի կարգավորման սիմպաթիկ օղակի ակտիվության նվազման մասին է վկայում նաև ՌՎՑ-ի, ՎՇՑ-ի և ԿԳԱՑ-ի մեծությունների նվազումը համապատասխանաբար 15.8%-ով ($p < 0.02$), 16.7%-ով ($p < 0.02$) և 4.9%-ով (նկ.1):



Նկ.1. IX դասարանում սովորող աղջիկների և տղաների սրտի ռիթմի լարվածության ցուցիչի, մոդայի տատանասահմանի, վեգետատիվ հավասարակշռության, կարգավորման


գործընթացների աղեկավարության ցուցիչների փոփոխություններն օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում

(1-դասերից առաջ, 2-դասերից հետո. * - $p < 0.05$, ** - $p < 0.01$, *** - $p < 0.001$.  աղջիկներ  տղաներ)

Տղաների $L3$ -ն շաբաթ օրը դասերից հետո նվազել է 20.5% -ով ($p < 0.02$), AMo -ն՝ 15.12% -ով ($p < 0.02$): Կարգավորման սիմպաթիկ օղակի ցուցանիշների նվազումը ուղեկցվել է Mo -ի և ΔX -ի բարձրացմամբ 8.3% -ով և 19.4% -ով ($p < 0.001$) և ՌՎՑ-ի, ՎՀՑ-ի ու ԿԳԱՑ-ի նվազումով համապատասխանաբար 28.4% -ով ($p < 0.05$), 18.5% -ով ($p < 0.01$), 7.8% -ով ($p < 0.05$): Միաժամանակ նկատվել է նաև կարդիոհիստերվալների վարիացիոն գործակցի մեծացում: Շաբաթ օրը դասերի վերջում աղջիկների V_k -ն մեծացել է 25.4% -ով ($p < 0.02$), իսկ տղաներինը՝ 29.9% -ով ($p < 0.001$):

Սրտի ռիթմի ինտեգրալային ցուցանիշների մեծությունների ավելի կտրուկ փոփոխություններ երկու սեռերի մոտ էլ նկատվել են շաբաթվա վերջին: Հինգշաբթի օրը դասերից հետո աղջիկների մոտ գրանցվել է $L3$ -ի իջեցում 23.1% -ով ($p < 0.05$), որը պայմանավորված է կարգավորման սիմպաթիկ կոնտուրի (AMo) ակտիվության նվազմամբ (24.3% -ով, $p < 0.001$): Նշված փոփոխություններն ուղեկցվել են Mo -ի և ΔX -ի մեծացմամբ համապատասխանաբար 14.1% -ով և 19.4% -ով ($p < 0.001$): ՌՎՑ-ի, ՎՀՑ-ի և ԿԳԱՑ-ի մեծությունները համապատասխանաբար նվազել են 17.9% -ով, 17.8% -ով, 17.9% -ով ($p < 0.05$): Շաբաթվա վերջում դասերից հետո V_k -ն մեծացել է 28.5% -ով ($p < 0.05$) (նկ.2):

Հինգշաբթի օրը դասերի վերջում համանման փոփոխություններ, բայց ավելի խորն արտահայտված, գրանցվել են նաև տղաների մոտ: Դասերից հետո տղաների սրտի լարվածության ցուցիչը նվազել է 26.4% -ով ($p < 0.001$), որն ուղեկցվել է AMo -ի նվազմամբ (22.3% , $p < 0.001$) և Mo -ի ու ΔX -ի մեծացմամբ համապատասխանաբար 20.9% -ով ($p < 0.02$) և 26.9% -ով ($p < 0.02$): Գրանցվել են նաև ՌՎՑ-ի, ՎՀՑ-ի և ԿԳԱՑ-ի ավելի արտահայտված փոփոխություններ: Նշված ցուցիչների մեծությունները համապատասխանաբար նվազել են 30% -ով ($p < 0.05$), 29.9% -ով ($p < 0.02$), 27.6% -ով ($p < 0.02$): Այս պայմաններում V_k -ն մեծացել է 32.4% -ով ($p < 0.001$):



Նկ. 2. X դասարանում սովորող աղջիկների և տղաների սրտի ռիթմի լարվածության ցուցիչի, մոդայի տատանասահմանի, վեգետատիվ հավասարակշռության, կարգավորման գործընթացների աղեկավարության ցուցիչների փոփոխություններն օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում

(1-դասերից առաջ, 2-դասերից հետո. * - $p < 0.05$, ** - $p < 0.01$, *** - $p < 0.001$  աղջիկներ,  տղաներ)

Ըստ ստացված արդյունքների, օրական ուսումնական ծանրաբեռնվածության ազդեցությամբ $L3$ -ի, AMo -ի, ՌՎՑ-ի, ՎՀՑ-ի, ԿԳԱՑ-ի մեծությունների նվազումը և Mo -ի, ΔX -ի ու V_k -ի մեծացումը վկայում են վեգետատիվ հավասարակշռության տեղաշարժի մասին դեպի ՎՆՀ-ի պարասիմպաթիկ օղակը և սրտի ռիթմի կարգավորման գործընթացների ապակենտրոնացման մասին:


Ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան դինամիկայում (հոկտեմբեր, դեկտեմբեր, մայիս) կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ սրտի ռիթմի լարվածության ցուցիչը համեմատաբար ավելի բարձր է եղել ուսում-

նական տարվա սկզբին. աղջիկների մոտ այն կազմել է 101.36 ± 5.63 , իսկ տղաներինը՝ 121.48 ± 10.04 : L_3 -ի, AM_0 -ի, $\Omega\text{-}\Phi_3$ -ի, Ψ_2 -ի, Ψ_3 -ի բարձր մեծություններն աղջիկների և հատկապես տղաների մոտ, ինչպես նաև հումորալ և պարասիմպաթիկ կարգավորման ցածր ակտիվությունը (M_0 , ΔX) հոկտեմբեր ամսին վկայում են սրտային ռիթմի կարգավորման ավտոնոմ կոնտուրի սահմաններում սիմպաթիկ օղակի բարձր ակտիվության մասին: Հարկ է նշել, որ ուսումնասիրված սեռային երկու խմբերում էլ տարեկան կտրվածքով՝ հոկտեմբերից մինչև մայիս, սրտի գործունեության կարգավորման մեխանիզմում գերակշռող է եղել կենտրոնական կոնտուրը՝ առավել արտահայտված տղաների մոտ:

X դասարանի աշակերտների սրտի ռիթմի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ աղջիկների L_3 -ը ֆիզիոլոգիական հանգստի պայմաններում կազմել է 97.74 ± 8.90 պ.մ., իսկ տղաներինը՝ 116.80 ± 9.64 պ.մ.: X դասարանցի աղջիկների խմբում շաբաթ օրը դասերից հետո ևս գրանցվել է L_3 -ի վիճակագրորեն հավանական իջեցում (15.7% -ով, $p < 0.05$), որը պայմանավորված է կարգավորման սիմպաթիկ օղակի ակտիվության (AM_0) թուլացմամբ (24.3% -ով $p < 0.05$): Դա ուղեկցվել է հումորալ և պարասիմպաթիկ օղակների (M_0 , ΔX) ազդեցության բարձրացմամբ համապատասխանաբար 6.7% -ով ($p < 0.05$) և 4.3% -ով ու $\Omega\text{-}\Phi_3$ -ի, Ψ_2 -ի, Ψ_3 -ի մեծությունների նվազմամբ՝ համապատասխանաբար 7.3% -ով ($p < 0.05$), 18.1% -ով ($p < 0.01$), 19.8% -ով ($p < 0.01$): Նույն խմբում հինգշաբթի օրը դասերից հետո գրանցված տվյալները վկայում են սրտի ռիթմի ինտեգրալային ցուցանիշների ավելի արտահայտված տեղաշարժերի մասին: Օրական և շաբաթական ծանրաբեռնվածության պայմաններում նմանատիպ փոփոխություններ են նկատվել նաև տղաների սրտի ռիթմի ինտեգրալային ցուցանիշներում: Սակայն ի տարբերություն աղջիկների, ինչպես շաբաթվա սկզբում, այնպես էլ վերջում այդ տեղաշարժերն ավելի ցայտուն են եղել: Շաբաթ օրը դասերի վերջում տղաների մոտ դիտվել է L_3 -ի, AM_0 -ի, $\Omega\text{-}\Phi_3$ -ի, Ψ_2 -ի և Ψ_3 -ի մեծությունների փոքրացում համապատասխանաբար 29.7% -ով ($p < 0.001$), 17.9% -ով ($p < 0.02$), 15.4% -ով ($p < 0.05$), 34.5% -ով ($p < 0.001$), 19.4% -ով ($p < 0.01$) (նկ. 2): Դիտված տեղաշարժերը վկայում են վեգետատիվ հաշվեկշռի թեքման մասին Ψ_2 -ի պարասիմպաթիկ կոնտուրի գերակշռման կողմը, ինչպես նաև սրտային ռիթմի կարգավորման գործընթացների ապակենտրոնացման մասին: Համանման փոփոխություններ, սակայն ավելի արտահայտված, տղաների մոտ նկատվել է նաև շաբաթվա վերջին՝ հինգշաբթի օրը: Ուսումնական օրվա ավարտին հինգշաբթի օրը L_3 -ը և AM_0 -ն նվազել են համապատասխանաբար 33.6% -ով ($p < 0.001$) և 21.9% -ով ($p < 0.01$):

Ուսումնական ողջ տարվա ընթացքում հետազոտվողների երկու խմբերում էլ կարգավորման կենտրոնական կոնտուրը եղել է գերակշռող: Հարկ է նշել, որ Ψ_2 -ի սիմպաթիկ բաժնի ակտիվության տեղաշարժերը և կարգավորման կենտրոնական կոնտուրն ավելի արտահայտված են տղաների մոտ: Առաջին կիսամյակի վերջում՝ դեկտեմբերին դիտվել է L_3 -ի նվազում ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների մոտ, որը պայմանավորված է սիմպաթիկ նյարդային համակարգի ցուցանիշ հանդիսացող AM_0 -ի ակտիվության նվազմամբ և կարգավորման պարասիմպաթիկ մեխանիզմների ակտիվության բարձրացմամբ. աղջիկների մոտ M_0 և ΔX -ի մակարդակները բարձրացել են 8.3% -ով ($p < 0.05$) և 6.7% -ով ($p < 0.05$), իսկ տղաներինը՝ 10.8% ($p < 0.05$) և 25.0% ($p < 0.001$) համապատասխանաբար: Գրանցված տեղաշարժերի արդյունքում երկու խմբում էլ նկատվել է V_k -ի մեծացում 38.2% -ով ($p < 0.001$) և 35.1% -ով ($p < 0.05$) համապատասխանաբար: Սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվության իջեցման մասին են վկայում նաև $\Omega\text{-}\Phi_3$ -ի, Ψ_2 -ի և Ψ_3 -ի ցուցանիշների նվազումը: Այս ժամկետում հետազոտվողների մեծամասնության մոտ գրանցվող սկատերգրերում դիտվել է ավտոռեգրեսիոն ամպլի դիսպլեյայի մեծացում, սպեկտրագրերում մեծացել է բարձրահաճախ ալիքների և շնչառական բաղադրամասերի հզորությունը: Չնայած ուսումնական տարվա ընթացքում զարգացող հոգնածությանը, մայիսին կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ նկատվել է սրտի ռիթմի կարգավորման սիմպաթիկ նյարդային համակարգի մարկերների (L_3 և AM_0) մակարդակների որոշ բարձրացում և հումորալ ու պարասիմպաթիկ կոնտուրների ակտիվության նվազում: Սրտի ռիթմի վիճակագրական բնութագրերի մեծություններում ինչպես IX, X, այնպես էլ XI դասարանցիների մոտ նկատվել են սեռային էական տարբերություններ: XI

դասարանի տղաների սրտի ռիթմի կարգավորման սիմպաթիկ օղակի ազդեցության մակարդակը և քրոնոտրոպ ֆունկցիայի կենտրոնական կարգավորումն ավելի բարձր են եղել, քան աղջիկներինը: Ուստի սիմպաթոտոնիկների մեջ ավելի շատ եղել են տղաներ, իսկ վագոտոնիկների մեջ՝ աղջիկներ: Ուսումնական տարվա ընթացքում առավոտյան ժամերին շաբաթ և հինգշաբթի օրերին աղջիկների և տղաների խմբերում L3-ի մեծությունները միմյանցից քիչ են տարբերվել: L3-ի առավել էական փոփոխություններ գրանցվել են օրական ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում: Շաբաթ օրերին ծանրաբեռնվածության նկատմամբ հետազոտվող երկու խմբերում էլ կայուն ռեակցիա է դրսևորվել, որը բնորոշվել է պարասիմպաթիկ ազդեցությունների ուժեղացմամբ և կարգավորման կենտրոնական մեխանիզմների թուլացմամբ: Աղջիկների խմբի - հետազոտվողների առավել արտահայտված փոփոխություններ օրական ծանրաբեռնվածության արդյունքում դիտվել են հինգշաբթի օրերին (նկ. 3):



Նկ. 3. XI դասարանում սովորող աղջիկների և տղաների սրտի ռիթմի լարվածության ցուցիչի, մոդայի տատանասահմանի, վեգետատիվ հավասարակշռության, կարգավորման գործընթացների աղեկվածության ցուցիչների փոփոխություններն օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում

(1-դասերից առաջ, 2-դասերից հետո. * - $p < 0.05$, ** - $p < 0.01$, *** - $p < 0.001$).

■ աղջիկներ, ■ տղաներ

Օրվա վերջին դասերից հետո L3-ը նվազել է 30.3%-ով ($p < 0.001$), ի հաշիվ սրտի ռիթմի կարգավորման սիմպաթիկ օղակի ակտիվության նվազման: Վերջինիս ապացույցն է հանդիսանում R-R ինտերվալների բարձր տատանողականությունը, ինչպես նաև վարիացիոն գործակցի մեծացումը: Դիտվել է նաև կարգավորման հումորալ գործոնի (M_o), վարիացիոն տատանասահմանի (ΔX) թույլ արտահայտված աճ (համապատասխանաբար 9.2%-ով և 5.9%-ով): Ի տարբերություն աղջիկների, տղաների խմբում օրական ծանրաբեռնվածության պայմաններում սրտի ռիթմի ինտեգրալային ցուցանիշների շեղումներն ավելի արտահայտված են եղել: Շաբաթվա սկզբին դասերից հետո տղաների L3-ի մեծությունը նվազել է 29.2%-ով ($p < 0.001$), որը հետևանք է սիմպաթիկ ցուցանիշների ակտիվության նվազման (AM_o), վարիացիոն տատանասահմանի (ΔX) և մոդայի (M_o) մեծությունների աճման: Շաբաթ օրը դասերից հետո AM_o -ն նվազել է 16.2 %-ով ($p < 0.001$), իսկ M_o -ն և ΔX -ը մեծացել են համապատասխանաբար 29.5%-ով ($p < 0.001$) և 34.6%-ով ($p < 0.01$): Գրանցվել են նաև Ռ-Վ3-ի, ՎZ3-ի և ՎԳՎ3-ի մեծությունների նվազում համապատասխանաբար 34.9%-ով ($p < 0.001$), 32.6%-ով ($p < 0.001$) և 27.1% ($p < 0.001$): Աղջիկների համեմատությամբ զգալիորեն մեծացել է նաև կարդիոինտերվալների տատանողականության գործակցը՝ 38.7%-ով ($p < 0.001$) (աղջիկներինը՝ ընդամենը 15.1%-ով, $p < 0.05$): Տղաների սրտի լարվածության ցուցիչը առավել նվազել է ուսումնական օրվա վերջում հինգշաբթի օրերին, առավոտյան ժամին գրանցված մեծությանը զիջելով 32.6%-ով ($p < 0.001$): Տղաների մոտ օրական ուսումնական ծանրաբեռնվածության արդյունքում հիստոգրերում դիտվել է նորմոսիստոլիա, սկստերգրերում՝ «ավտոռեգրեսիոն ամպի» դիսպերսիայի չափավոր մեծացում, սպեկտրագրերում՝ բարձր և միջին հաճախությամբ տատանումների արտահայտվածություն:

Առաջին կիսամյակի վերջում XI դասարանցիների մոտ դեկտեմբերին տեղի է ունեցել սրտի կարգավորող մեխանիզմների ակտիվության համեմատական թուլացում: Պարասիմպաթիկ ազդեցությունների ուժեղացման ապացույցն է նաև ռիթմոգրերում դիտվող R-R ինտերվալների տատանումների տատանասահմանի մեծացումը միջին արժեքի համեմատությամբ, սկստերգրերում՝ «ավտոռեգրեսիոն ամպի» խտության նոսրացումը, սպեկտրագրերում ցածր հաճախությամբ ալիքների սպեկտրի մասնաբաժնի փոքրացում: Սրտի ռիթմի կարգավորման ինտեգրալային ցուցանիշների վերլուծությունը ուսումնական տարվա վերջին՝ մայիսին, վկայում

է սիմպաթիկ նյարդային համակարգի մարկերների (L3, AM₀) բարձրացում դեկտեմբեր ամսվա համեմատությամբ և հումորալ ու պարասիմպաթիկ օղակի ակտիվության իջեցում:

Այսպիսով, IX-XI դասարանների աշակերտների օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը բնութագրվում է վեգետատիվ հավասարակշռության տեղաշարժով դեպի վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ կոնտուրի գերակշռությունը, սրտի ռիթմի կարգավորման կենտրոնական մեխանիզմների ակտիվության նվազմամբ և կարգավորման մեխանիզմների ապակենտրոնացմամբ: Առավել արտահայտված շեղումներ գրանցվել են IX-XI դասարանների աշակերտների՝ մասնավորապես տղաների հետազոտված ցուցանիշներում շաբաթվա վերջին՝ օրական ծանրաբեռնվածության պայմաններում: Տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության դինամիկայում գրանցվել են սիրտ-անոթային համակարգի գործունեության փուլային փոփոխություններ: Առաջին կիսամյակի վերջում՝ դեկտեմբերին գրանցվել է սրտի ռիթմի կարգավորող մեխանիզմների ակտիվության համեմատական թուլացում՝ սիմպաթիկ օղակի լարվածության նվազում, սրտի ռիթմի վրա պարասիմպաթիկ ազդեցության ուժեղացում: Ուսումնական տարվա վերջին՝ մայիսին, գրանցվել է սիմպաթիկ նյարդային համակարգի մարկերների բարձրացում դեկտեմբեր ամսվա համեմատությամբ և հումորալ ու պարասիմպաթիկ օղակի ակտիվության իջեցում:

Ուստի խորացված ուսուցմամբ կրթական համալիրներում անհրաժեշտ է անցկացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված ուսման սանիտարահիգիենիկ պայմանների բարձրացմանը, օրվա ռեժիմի մշակմանը, հանգստի և ֆիզիկական ծանրաբեռնվածության հերթափոխմանը: Անհրաժեշտ է դպրոցներում կազմակերպել վերականգնողական կաբինետներ, որտեղ դպրոցականները կարող են ստանալ բժշկական և հոգեբանական համապատասխան օգնություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Баевский Р.М., Кудрявцева В.И.* Особенности регуляции сердечного ритма при умственной работе. Физиология человека, 1, 3, 198-201, 1975.
2. *Блинова Н.Г., Казин Э.М., Витязь С.В.* Особенности психофизиологического развития и формирования приспособительных реакций к обучению у подростков в условиях гимназии. Физиология человека, 35, 6, 68-75, 2009.
3. *Гребняк Н.П., Щудро С.А.* Адаптация старшеклассников к обучению. Гигиена и санитария, 1, 55-58, 2008.
4. *Криволапчук И.А.* Функциональное состояние детей 9-10 лет при напряженной информационной нагрузке и физическая работоспособность. Физиология человека, 35, 6, 111-121, 2009.
5. *Минасян С.М., Геворкян Э.С., Адамян Ц.И. и др.* Особенности сердечного ритма у учеников в период контрольных работ. Гигиена и санитария, 2, 60-63, 2007.
6. *Псеунок А.А.* Оценка адекватности учебных и физических нагрузок с учетом возрастно-половых особенностей школьников 5-6 классов. Вестник Адыгейского государственного университета, 1, 78-83, 2009.
7. *Рапопорт И.К., Тимошенко К.Т.* Дифференцированный подход динамики показателей состояния здоровья старшеклассников. Мат-лы Всероссийской конференции с международным участием. Гигиена детей и подростков: история и современность, 363-366, 2009.
8. *Сафронова А.И., Вахмистрова А.В., Никулин В.Н., Каримова Л.Н.* Функциональное состояние вегетативной нервной системы школьников и гимназистов в условиях комплексного воздействия факторов школьной и окружающей среды. Гигиена и санитария, 4, 55-58, 2009.
9. *Соенина Е.В., Сетко А.Г.* Влияние инновационных систем обучения на формирование адаптационных возможностей гимназистов. Гигиена и санитария, 4, 64-66, 2009.
10. *Тимошенко К.Т.* Гигиеническая оценка образа жизни и состояния здоровья учеников 10-11-х классов, ориентированных на получение высшего медицинского образования. Гигиена и санитария, 4, 60-64, 2008.
11. *Hojgard M.V., Holstein-Rathlou W.H., Anger E., Kanters I.K.* Dynamics of spectral components of HRV during changes in autonomic balance. Am. J. Physiol., 275, 1, Pt 2, 213-217, 1998.

Ստացվել է 02.04.2014



Биолог. журн. Армении, 1 (67), 2015

ВЫДЕЛЕНИЕ И ХАРАКТЕРИСТИКА ТЕРМОФИЛЬНЫХ БАЦИЛЛ – ПРОДУЦЕНТОВ ИНУЛИНАЗ

Л.С. МАНУКЯН, Н.А. АНДРЕАСЯН, К.Б. АФЯН, В.Т. КОЧИКЯН

НПЦ “Армбиотехнология” НАН РА
armbiotech@gmail.com

Выделены в чистую культуру термофильные штаммы-продуценты инулиназы и на основании морфологических и биохимических характеристик идентифицированы как представители *Geobacillus stearothermophilus* и *Bacillus polymyxa*.

Geobacillus – Bacillus – инулиназы – термофильные бациллы

Անջատվել և բուծագրվել են ինուլինազների թերմոֆիլ մանրէարտադրիչներ և մորֆո-ֆիզիոլոգիական, կենսաքիմիական բուծագրերի հիման վրա նույնականացվել որպես *Geobacillus stearothermophilus* և *Bacillus polymyxa*:

Geobacillus – Bacillus – ինուլինազներ – թերմոֆիլ բացիլներ

Strains-producers of inulinase thermophilic bacteria have been isolated in pure culture and identified on the basis of morpho-physiological and biochemical characteristics as representatives of *Geobacillus stearothermophilus* and *Bacillus polymyxa*.

Geobacillus – Bacillus – inulinases – thermophilic bacilli

Инулиназы (2,1-β-D фруктан – фруктаногидролазы КФ 3.2.1.7) расщепляют инулин и другие фруктаны (фруктоолигосахариды) до фруктозы.

Возросший интерес к инулиназам вызван перспективами их использования для получения фруктозо-глюкозного сиропа, синтеза олигосахаридов, а также биоэтанола из инулинсодержащего сырья, в основном топинамбура и цикория [2, 6].

Продуценты этого фермента широко распространены среди различных видов микроскопических грибов, дрожжей и бактерий [1, 3, 4, 9].

Бактериальные организмы исследованы сравнительно слабо, хотя представляют большой практический интерес, особенно их экстремофильные формы [8].

Целью нашей работы являлось выделение, характеристика и идентификация термофильных бактерий – продуцентов инулиназы.

Материал и методика. В качестве основной питательной среды использовали следующий состав (%): инулин – 2; дрожжевой экстракт – 0.2; NaNO_3 – 0,05; KH_2PO_4 – 0,05; MgSO_4 – 0,05; KCl – 0,05; FeCl_3 – 0,001, (pH 7,0; инкубация при 65°C).

Для окрашивания клеток применяли методику окраски по Граму, споры красили по методу Ожешки, жгутики – по способу Леффлера в модификации Пешкова [5].

Морфологию клеток и спор у выделенных культур изучали с помощью микроскопа Leica DM 500 trinocular (x1000) и программного обеспечения Digital Camera EC3 Leica Microsystem (x10).

Идентификацию выделенных культур бактерий проводили по определителю Берджи [7].

Результаты и обсуждение. Предварительные опыты показали, что для целенаправленного выделения культур-продуцентов инулиназ наиболее эффективным является использование метода накопительных культур на среде, содержащей инулин в качестве единственного источника углерода.

Образцы почв, взятые из различных эколого-географических регионов Армении, помещали в стерильную воду в соотношении 1:3, отстаивали и использовали в качестве инокулята. Накопительные культуры получали в аэробных условиях при 65°C. Инкубирование проводили в течение 3-4-х суток, после чего высевали на чашки Петри с агаризованной средой следующего состава (%): инулин – 2,0; дрожжевой экстракт – 0,2; NaNO_3 – 0,05; KH_2PO_4 – 0,05; MgSO_4 – 0,05; KCl – 0,05; FeCl_3 – 0,001, (pH 7,0). После трехкратной очистки посевом на агаризованные среды выделены в чистую культуру три термофильных штамма-продуцента инулиназ (Т-21, Т-13, Т-79). Изучены их морфологические и физиолого-биохимические признаки.

Культура Т-21: Грамположительные палочковидные, одиночные, подвижные клетки размером 0,7-0,8 x 2,5-4,0 мкм; образующие эллипсоидные эндоспоры, расположенные терминально, раздувающие клетку. На агаризованной среде образует крупные округлые колонии диаметром 3-4 мм, матовые, кремовые. Поверхность колоний гладкая, профиль – плоский, край колоний ровный, структура – однородная. На жидкой среде культура Т-21 образует сплошную толстую, складчатую, всплывающую пленку кремового цвета (рис. 1).

Культура Т-13: Грамположительные палочковидные, одиночные, подвижные клетки размером 0,6-0,9 x 2,5-5 мкм, образующие сферические эндоспоры, расположенные терминально, раздувающие клетку. На агаризованной среде образует округлые колонии диаметром 3 мм, блестящие, кремовые. Поверхность колоний шероховатая, профиль выпуклый, край колоний волнистый, структура однородная. Эта культура на жидкой среде образует сплошную тонкую, гладкую, всплывающую пленку кремового цвета (рис. 2).

Культура Т-79: Грамположительные палочковидные, одиночные, подвижные клетки размером 0,6-0,8 x 2,0-5,0 мкм, образующие эллипсоидные эндоспоры, расположенные центрально, не раздувающие клетку. На агаризованной среде образует бесцветные колонии диаметром 4 мм. Поверхность колоний шероховатая, профиль выпуклый, край колоний волнистый, структура мелкозернистая. На жидкой среде культура Т-79 образует кольцеобразную, толстую, гладкую, всплывающую пленку (рис. 3).




Рис.1. *G. stearothermophilus* T – 21 **Рис. 2** *G. stearothermophilus* T – 13 **Рис. 3** *Bacillus polymyxa* T – 79

Изучение выделенных термофильных культур показало, что они имеют в целом близкие физиолого-биохимические свойства: отрицательные реакции на образование индола, ацетилметилкарбинола, использование цитрата и пропионата в качестве источника углерода; положительные реакции на образование каталазы, дигидрооксиацетона, гидролиз инулина и денитрификацию. Показана вариабельность культур в образовании кислоты и газа из глюкозы, арабинозы, ксилозы и маннита. Культуры характеризуются наличием протеолитической и лецитиназной активности и отсутствием уреазной. Они не усваивают тирозин, не гидролизуют эскулин, не растут в присутствии 5% NaCl, сероводород образует только культура Т – 21. В качестве источников углерода используют ксилозу, рамнозу, арабинозу, маннозу, глюкозу, галактозу, мальтозу, сахарозу, трегалозу. Не усваивают лактозу, дульцит, сорбит, меллибиозу, салицин, фумаровую и янтарную кислоты.

Таким образом, из различных почвенных образцов выделены термофильные продуценты инулиназ. На основании морфологических и биохимических характеристик две культуры идентифицированы как *Geobacillus stearothermophilus* (Т–21, Т–13); а одна – *Bacillus polymyxa* (Т–79).

ЛИТЕРАТУРА

1. Абеян В.А., Манукян Л.С. Характеристика экзоинулиназ *Kluyveromyces marxianus* и *Bacillus licheniformis*. Биохимия, 61, 6, с. 1028-1036, 1996.
2. Балаян А.М., Кочикян В.Т., Манукян Л.С., Андреасян Н.А., Афян К.Б., Дюкова К.А. Разработка технологического процесса получения этилового спирта из инулинсодержащего сырья. 2-я Меж. науч. конф. молодых ученых „Вклад молодого поколения в развитие биотехнологии“, Ереван РА, 1-4 октября, с. 14. 2013.
3. Балаян А.М., Пивазян Л.А., Хачатурян А.А., Африкян Э.К., Абеян В.А. Инулиназы *Penicillium palitans* и *Penicillium cyclospium*. Биохимия, 61, 5, с. 895-902, 1996.
4. Ковалева Т.А., Холявка М.Г., Таха А.С. Исследование некоторых параметров иммобилизованной инулиназы из *Kluyveromyces marxianus* как перспективного катализатора реакции гидролиза инулина. Биотехнология, 2, с. 55-59, 2009.
5. Нетрусов А.И., Егорова М.А., Захарчук Л.М. Практикум по микробиологии., М., Издательский центр „Академия“, 608 с., 2005.
6. Afrikan E.G. Topinambur: bioenergetic and biomedical potential. Annals of Agrarian Science, Tbilisi, Georgia, 10, 2, pp. 24-30, 2012.
7. Bergey's Manual of Systematic Bacteriology. Second Edition, Volume Three, The Firmicutes, Editors: Whitman W.B., Parte A.C., London New York, Springer Dordrecht Heidelberg, p. 1450, 2009.
8. Kato K., Araki T., Kitamura T., Norita N., Moori M., Suzuki Y. Purification and properties of a thermostable inulinase (β -D-fructan fructohydrolase) from *Bacillus stearothermophilus* KP 1289. Starch, 51, pp. 253-258, 1999.
9. Nakamura T., Maruki S., Nakatsu S., Ueda S. General properties of an extracellular inulase from *Aspergillus niger*. Nippon Nogei Kagakukaishi, 52, p. 581, 1978a.

Поступила 19.09.2014



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(67), 2015

ԾԻՐԱՆԵՆՈՒ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՇԵՐՏԱՎՈՐ ՊՏՂԱՅԵՑԻ ԴԵՄ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հ.Լ. ԹԵՐԼԵՄԵՋՅԱՆ, Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և
վերլուծության գիտական կենտրոն
hlt_arm@yahoo.com*

Բացահայտված է, որ ամպլիգո, պրոտեուս և պրոկլեյմ պատրաստուկները առանձին ցուցաբերում են բարձր կենսաբանական արդյունավետություն շերտավոր պտղացեցի երիտասարդ թրթուրների դեմ: Նշված ցուցանիշը համեմատաբար ցածր է ԲՏԲ + պրոտեուս, ԲՏԲ + ամպլիգո, ԲՏԲ + պրոկլեյմ ցածր կոնցենտրացիաների առանձին զուգակցություններում:

Հաստատված է, որ ամպլիգոն, պրոտեուսը և պրոկլեյմը ցուցաբերում են չափանմուշային արրիվոյից և ԲՏԲ-ից հավաստի տարբերվող, իսկ զուգակցված պատրաստուկներն՝ չտարբերվող կենսաբանական արդյունավետություն:

*Շերտավոր պտղացեց – միջատասպաններ – ծիրանենի – ցողում –
կենսաբանական արդյունավետություն*

Выявлено, что препараты амплиго, протеус и проклейм проявляют высокую биологическую эффективность против гусениц младших возрастов плодовой полосатой моли. Этот показатель был относительно низкий в сочетаниях пониженных норм БТБ+протеус, БТБ+амплиго, БТБ+проклейм.

Показано, что биологическая эффективность препаратов амплиго, протеус и проклейм достоверно отличается от таковой эталонных препаратов арриво и БТБ и не отличаются от комбинированных препаратов.

*Полосатая плодовая моль – инсектициды – абрикос –
опрыскивание – биологическая эффективность*

It is revealed that the preparations Ampligo, Proteus and Prokleym have showed high biological effectiveness against the low-age striped fruit moth. This value was relatively low in lower norms of combinations of BTB + Proteus, BTB + Ampligo, BTB + Prokleym.

It is shown that the biological efficiency of Ampligo, Proteus and Prokleym is significantly different from the efficiency of reference preparations Arrivo and BTB, and does not differ from the combined drugs.

Striped fruit moth – insecticides – apricot – spraying – biological efficiency

Հայաստանի Հանրապետության Արարատյան հարթավայրի բնակլիմայական պայմանները նպաստավոր են պտղաբուծության, մասնավորապես ծիրանենու մշակության համար: Այս մշակաբույսի եկամտաբերության բարձրացմանը հաճախակի խոչընդոտում է թեփուկաթևների (Lepidoptera) կարգին պատկանող շերտավոր պտղացեցը (*Anarsia lineatella* Z.), որի արդյունքում նվազում է բերքի քանակն ու որակը, իսկ երբեմն էլ մշակաբույսը չորանում է: Հաստատված է, որ ծիրանենուց բացի,

վնասատուից տուժում են նաև դեղձենու, սալորենու, խնձորենու, նշենու և այլ պտղատուների դալար շիվերն ու պտուղները [1, 2]:

Ուստի, անչափ կարևորվում է վերոնշյալ վնասատուի դեմ հիմնավորված, շրջակա միջավայրի համար նվազ վտանգավոր և բարձր արդյունավետ պայքարի նորագույն տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը, որը կնպաստի այգեգործական տնտեսությունների արդյունավետ արտադրության բարձրացմանը:

Ելնելով վերոնշյալից, խնդիր է դրվել արտադրության պայմաններում շերտավոր պտղացեցի ցածր հասակի թրթուրների դեմ փորձարկել ժամանակակից ինսեկտիցիդներ և դրանց ենթաշեմային (սուբլեթալ) խտությունների առանձին զուգակցությունները:

Նյութ և մեթոդ: Հետազոտություններն կատարվել են 2014 թ. Արագածոտնի մարզի Փարպի համայնքում:

Հետազոտության նյութ են հանդիսացել շերտավոր պտղացեցի ցածր հասակի թրթուրները, բակտերիական FSC (բիտոքսիբացիլին, փոշի, 1500 ակտիվության միավոր/մգ), քիմիական ամպլիգո (15% միկրոկապսուլացված կախույթ), պրոտեուս (11% յուղային դիսպերսիա) և պրոկլեյմ (5% ջրում դիսպերսվող հատիկներ) առևտրային պատրաստուկները, ծիրանենու «Երևանի» սորտը: Օգտագործվել է Kapferol AL մակնիշի ֆերոմոնը, որում ֆերոմոնի քանակությունը կազմել է 5000 մկգ: Ցողումները կատարվել են ՕՎՏ-1Ա մակնիշի տրակտորային սրսկիչով: Աշխատանքային հեղուկի ծախսը կազմել է 1000 լ/հա: Տարբերակներից յուրաքանչյուրը փորձարկվել է 0,1 հա վրա 3-ական կրկնողությամբ: Ստուգիչ է հանդիսացել չցողված այգու վնասատուով բնակեցված տեղամասը: Չափանմուշներ են հանդիսացել FSC (ծախսի նորման 3 կգ/հա) և արրիվո (25% խԷ, ծախսի նորման 0,3 լ/հա) պատրաստուկները: Պատրաստուկների կենսաբանական արդյունավետությունը որոշվել է ըստ մեթոդական ցուցումների [3, 4], իսկ ստացված տվյալների մաթեմատիկական վերլուծությունը՝ ըստ Օդլովի [5]: Վնասատուի արու թիթեռների թռիչքը դիտարկվել է ֆերոմոնային թակարդների օգնությամբ:

Արդյունքներ և քննարկում: Առանձին և զուգակցված պատրաստուկների կենսաբանական արդյունավետության և վիճակագրական առանձին ցուցանիշները ներկայացված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Առանձին և զուգակցված պատրաստուկների կենսաբանական արդյունավետությունը շերտավոր պտղացեցի ցածր հասակի թրթուրների դեմ ծիրանենու այգիներում

Տարբերակ	Պատրաստուկի ծախսի նորման, լ/հա, կգ/հա	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		Ստյուդենտի t _{չափ.} -ի հաշվարկային ցուցանիշը	Փորձի սխալը, %
		2	4		
Ամպլիգո	0,3	89,1	98,2	8,188* 10,408	2,6
Պրոտեուս	0,7	90,9	95,4	6,415 9,035	4,1
Պրոկլեյմ	0,3	94,0	99,0	6,968 9,294	2,8
FSC + պրոտեուս (նոսրացումը՝ համապատասխանաբար 3 և 4 անգամ)	1 + 0,17	65,6	86,0	0,766 2,074	5,3
FSC + ամպլիգո (նոսրացումը՝ համապատասխանաբար 2 և 5 անգամ)	1,5 + 0,06	64,3	84,7	1,766 1,823	3,4
FSC + պրոկլեյմ (նոսրացումը՝ համապատասխանաբար 3 և 6 անգամ)	1 + 0,05	70,4	87,5	0,061 3,078	3,7
FSC (չափանմուշ)	3	62,5	81,2		4,8
Արրիվո (չափանմուշ)	0,3	80,0	87,6		3,1

Ծանոթագրություն. Ստյուդենտի t չափ.-ի աղյուսակային ցուցիչը P_{0.95} և n=3-ի դեպքում հավասար է 3,182:

Համարիչում՝ փորձնական և չափանմուշային արրիվոյի, հայտարարում՝ փորձնական և չափանմուշային FSC-ի կենսաբանական արդյունավետության համեմատական գնահատականն է Ստյուդենտի t_{չափ.}-ի հաշվարկային ցուցանիշներով:

Աղ. 1-ում ներկայացված ցուցանիշներից երևում է, որ ամպլիգոյի (0,3 լ/հա), պրոտեոսի (0,7 լ/հա), և պրոկլեյմի (0,3 կգ/հա) առանձին խտությունները վնասատուի ցածր հասակի թրթուրների դեմ ցողումից 4 օր անց ընդհանուր առմամբ ցուցաբերել են 95,4-99,0 % կենսաբանական արդյունավետություն: Վերջինիս ցուցանիշները նշյալ պատրաստուկների պարագայում ցողումից 2 օր անց ևս եղել են բարձր և տատանվել են 89,1-94,0 %-ի սահմաններում:

Աղ. 1-ի տվյալներից երևում է, որ չնայած պրոկլեյմը զուգակցություններում քիմիական մյուս միջատասպանների համեմատ նոսրացվել է առավել չափով (նոսրացումը 6 անգամ), այնուհանդերձ F5F + պրոկլեյմ զուգակցությունը ինտեգրացված պատրաստուկների ընդհանուր շարքում ցողումից 4 օր անց ցուցաբերել է համեմատաբար բարձր՝ 87,5% կենսաբանական արդյունավետություն, ինչը, հավանաբար, պայմանավորված է պրոկլեյմ պատրաստուկում առկա ազդող նյութի առանձնահատկությամբ: Զուգակցված պատրաստուկներով մյուս տարբերակներում (F5F + ամպլիգո, F5F + պրոտեոս) կենսաբանական արդյունավետությունը ցողումից 2 և 4 օր անց կազմել է համապատասխանաբար 64,3 և 65,6 և 84,7 և 86,0 %: Չափանմուշային F5F և արրիվո տարբերակներում կենսաբանական արդյունավետությունը ցողումից 4 օր անց կազմել է համապատասխանաբար 81,2 և 87,6 %: Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ով համեմատելով փորձնական և չափանմուշային տարբերակներում ցողման 4-րդ օրն արձանագրված կենսաբանական արդյունավետության միջին ցուցանիշները, պարզվել է, որ ամպլիգոյի (0,3 լ/հա), պրոտեոսի (0,7 լ/հա) և պրոկլեյմի (0,3 կգ/հա) համապատասխան ծախսի նորմաները չափանմուշային արրիվոյի և F5F-ի համեմատ ցուցաբերում են արժանահավատորեն տարբերվող կենսաբանական բարձր արդյունավետություն ($P_{0.95}$ և $n=3$ -ի դեպքում Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի հաշվարկային համապատասխան ցուցանիշներ 6,415-8,188 և 9,035-10,408 > 3,182 Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի աղյուսակային ցուցիչից):

Վիճակագրական վերլուծության արդյունքներով հաստատված է նաև, որ F5F + պրոտեոս, F5F+ամպլիգո և F5F+պրոկլեյմ ծախսի ցածր նորմաներով զուգակցությունները ցողումից 4 օր անց ցուցաբերել են չափանմուշային արրիվոյից և F5F-ից արժանահավատորեն չտարբերվող կենսաբանական արդյունավետություն ($P_{0.95}$ և $n=3$ -ի դեպքում Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի հաշվարկային համապատասխան ցուցանիշներ՝ 0,061-1,766 և 1,823-3,078 < 3,182 Ստյուդենտի $t_{\text{չափանիշ}}$ -ի աղյուսակային ցուցիչից) (աղ. 1): Աղ. 1-ի տվյալներից երևում է նաև, որ փորձի սխալը փորձարկված միջատասպանների տարբերակներում տատանվել է 2,6-5,3 %-ի սահմաններում, ինչն էլ հաստատում է գիտափորձերի արդյունքների հավաստիությունը:

Այսպիսով, պարզվել է, որ ամպլիգոյի, պրոտեոսի և պրոկլեյմի մահացու խտությունները շերտավոր պտղացեցի ցածր հասակի թրթուրների դեմ ցողումից 4 օր անց ցուցաբերում են չափանմուշային արրիվոյի և F5F-ի ցուցանիշներից արժանահավատորեն տարբերվող կենսաբանական բարձր արդյունավետություն:

Բացահայտվել է, որ F5F + պրոտեոս, F5F + ամպլիգո և F5F + պրոկլեյմ ծախսի ցածր չափաքանակներով զուգակցությունները շերտավոր պտղացեցի դեմ ցուցաբերում են քիմիական (արրիվո) և բակտերիական (F5F) պատրաստուկներից էապես չտարբերվող կենսաբանական արդյունավետություն: Մաթեմատիկական հաշվարկներով հաստատված է, որ գիտափորձերի արդյունքները հավաստի են: Առաջարկվող զուգակցությունների կիրառումը գյուղատնտեսական արտադրության մեջ կնպաստի պտղատու այգիների պեստիցիդային ծանրաբեռնվածության նվազեցման, որն իր հերթին ունի կարևոր բնապահպանական նշանակություն:

Սույն հոդվածը հրատարակվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող 13-4C076 ծածկագրով թեմայի շրջանակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Թերլեմեզյան Հ.Լ.* Օիրանենու հիմնական վնասատուները ու պայքարը դրանց դեմ (շերտավոր պտղացեց). Տեղեկատվական թերթիկ, Երևան, 3 էջ, 2014:
2. Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների, անտառների և պահեստների վնասատուները: Երևան, ՀՍՍՀ ԳԱ, էջ 588-589, 1976:
3. *Ганиев М.М., Недорезков В.Д.* Химические средства защиты растений. М.: Колос, 248 с., 2006.
4. Методические указания по испытанию биопрепаратов для защиты растений от вредителей, болезней и сорняков. М.: Колос, 41 с., 1973.
5. *Орлов А.И.* Прикладная статистика. М., Экзамен, 671 с., 2006.

Ստացվել է 12.09.2014



Биолог. журн. Армении, 1 (67), 2015

АННА СУРЕНОВНА БОЯДЖЯН



Биологическая общественность Армении понесла тяжелую утрату. 28-го января скорпостижно ушла из жизни крупный ученый и видный организатор науки, директор Института молекулярной биологии НАН РА, руководитель Отдела прикладной молекулярной биологии и лаборатории геномики и иммуномики человека, член-корреспондент Национальной академии наук Армении, доктор биологических наук, профессор Анна Суреновна Бояджян.

Анна Суреновна Бояджян родилась в 1954 г. в Ереване. В 1976 г. она окончила с отличием биологический факультет ЕГУ, а в 1977-1978 гг. прошла стажировку в Москве в Институте медицинской и биологической химии АМН СССР. С 1979 года А.С.Бояджян являлась аспирантом, а затем сотрудником Института биохимии АН Армении. В 1986 г. она защитила кандидатскую, а в 1997 году – докторскую диссертацию. Начиная с 1988 г. научная деятельность А.С. Бояджян неразрывно связана с Институтом экспериментальной (далее – молекулярной) биологии НАН РА. Именно здесь полностью раскрылись ее незаурядные способности ученого и организатора науки. В течении сравнительно короткого периода она стала заведующей лабораторией, с 1997 г. – заместителем директора, а с 2006 года директором Института. С 2013 года она руководила Отделом прикладной молекулярной биологии Института, куда входят 3 лаборатории и 4 исследовательские группы.

Будучи глубоко интеллигентным человеком и талантливым ученым, Анна Суреновна Бояджян всецело жила интересами любимой науки. Ей удалось основать и развить в Армении школу молекулярной и клеточной биологии. В Анне Суреновне прекрасно сочетались черты настоящего ученого, подлинного интеллигента, яркой личности, щедрого и заботливого друга.

Благодаря своей исключительной энергии и энтузиазму, А.С. Бояджян придала Институту Молекулярной биологии НАН РА статус одного из передовых научных учреждений Армении. Ее творческая и организационная активность вдохновляла молодежь, убеждая, что даже в трудных реалиях сегодняшней науки можно выполнять работы международного класса. Именно поэтому Институт молекулярной биологии выделяется сегодня солидной научной продукцией, значительная часть которой публикуется в авторитетных международных журналах, а также большим количеством молодых перспективных ученых, что вселяет уверенность в завтрашнем дне института.

Наряду с плодотворной научной деятельностью А.С. Бояджян активно занималась и педагогической работой. Она заведовала кафедрой молекулярной и клеточной биологии Научно-образовательного центра НАН РА, вела там, а также на биологическом факультете ЕГУ и в Российско-армянском (Славянском) университете лекционные курсы, руководила работами студентов-магистров. Профессор А.С. Бояджян была научным руководителем более двадцати кандидатских диссертационных работ, консультантом докторских диссертаций, председателем Ученого совета института и Специализированного совета по присуждению ученых степеней и т.д. Она была также заместителем главного редактора и активным членом редколлегии «Биологического журнала Армении».

Анна Суреновна Бояджян - автор около 400 научных трудов, в числе которых 13 монографий, посвященных изучению механизмов регуляции клеточной активности и их нарушениям при аутоиммунных, аутовоспалительных, психических и цереброваскулярных заболеваниях. Исключительная научная требовательность, высокий профессионализм, уникальная трудоспособность и честность в оценках обеспечивали работам, вышедшим из под ее пера, самый высокий научный уровень. Наряду со статьями в авторитетных международных научных журналах, она поддерживала и публикации в отечественных изданиях, активно популяризировала в Армении современные достижения биомедицины. Международные конференции и школы молодых ученых, организованные при ее активном участии, дали возможность проявить себя десяткам талантливым исследователям в области молекулярно-клеточной биологии.

Деятельность профессора А.С.Бояджян высоко оценена как в Армении, так и за рубежом. Она была удостоена медали Анания Ширакаци, золотой медали «За вклад в развитие науки и техники», присуждаемой организацией «Global Rating» (Великобритания), была избрана заслуженным профессором Международного университета Вены, членом редколлегии многих зарубежных научных журналов.

Светлая память о незабвенной Анне Суреновне Бояджян будет долго жить в сердцах ее друзей и коллег.

Редакция «Биологического журнала Армении»